ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 26-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ-ՔՆՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՇՐՋԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԵՐԹՈՒՂԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծառայությունների մատուցումը քաղաքացիներին և Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց առավել հասանելի դարձնելու նպատակով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ) և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼՎ) կողմից 2026 թվականի ապրիլ ամսվա շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով մատուցվող ծառայությունների հետևյալ ցանկը՝

1) ՀՀ ՆԳՆ ՄՔԾ կողմից՝

ա. անձնագրի փոխանակում,

բ. հանրային ծառայությունների համարանիշի տեղեկանքի տրամադրում,

գ. հաշվառման տեղեկանքի տրամադրում,

դ. ժամանակավոր պաշտպանության վկայականի տրամադրում և (կամ) փոխանակում,

ե. հաշվառումից հանում,

զ. անձնագրերի մասին տեղեկանքի դիմումի տրամադրում,

է. խորհրդատվության տրամադրում.

ը. Ղարաբաղից տեղահանված անձանց Հայաստանի Հանրապետության

Նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու վերաբերյալ դիմումների ընդունում:

2) ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼՎ կողմից՝

ա. տրանսպորտային միջոցի սեփականության վկայականի փոխանակում կամ կորստի դեպքում նորի տրամադրում,

բ. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի փոխանակում կամ կորստի դեպքում նորի տրամադրում,

գ. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում անձնագրային տվյալների փոփոխություն,

դ. տրանսպորտային միջոցի խոտանում,

ե. տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր կասեցում,

զ. սահմանափակումների մասին տեղեկանքի տրամադրում,

է. վարորդական իրավունքի վկայականի փոխանակում կամ կորստի դեպքում նորի տրամադրում:

2. ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետ Նելլի Դավթյանին և ՀՀ ՆԳՆ ՀՔԾՄԹԼՎ պետ Արարատ Թևոսյանին՝ շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով ծառայությունների մատուցումը քաղաքացիներին և Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց առավել հասանելի դարձնելու նպատակով համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ փոխհամաձայնեցված ժամանակացույցով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության լիազորությունների շրջանակում ծառայություններ մատուցելու համար:

3. Հաստատել 2026 թվականի ապրիլ ամսվա շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով մարզերում մատուցվող ծառայությունների ժամանակացույցը և երթուղին հետևյալ հաջորդականությամբ՝

1) ապրիլի 3-ին՝ Կոտայքի մարզի Չարենցավան և Բյուրեղավան համայնքներ՝ 2026 թվականի մարտի 27-ին ընդունված դիմումների շրջանակներում փաստաթղթերի հանձնման աշխատանքներ,
2) ապրիլի 3-ին՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ.
3) ապրիլի 3–ին՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ.
4) ապրիլի 10-ին՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Ճամբարակ համայնքներ՝ 2026 թվականի ապրիլի 3-ին ընդունված դիմումների շրջանակներում փաստաթղթերի հանձնման աշխատանքներ,
5) ապրիլի 10-ին՝ Արարատի մարզի Արարատ համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ.
6) ապրիլի 10–ին՝ Կոտայքի մարզի Գառնի համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ
7) ապրիլի 17-ին՝ Արարատի մարզի Արարատ և Կոտայքի մարզի Գառնի համայնքներ՝ ապրիլի 10-ին ընդունված դիմումների շրջանակներում փաստաթղթերի հանձնման աշխատանքներ.
8) ապրիլի 17-ին՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ.
9) ապրիլի 17-ին՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ
10) ապրիլի 23–ին՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Կոտայքի մարզի Չարենցավան համայնքներ՝ ապրիլի 17-ին ընդունված դիմումների շրջանակներում

փաստաթղթերի հանձնման աշխատանքներ.

11)ապրիլի 23-ին՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ,

12) ապրիլի 23-ին՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ,

13) ապրիլի 30–ին՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ և Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքներ՝ ապրիլի 23-ին ընդունված դիմումների շրջանակներում փաստաթղթերի հանձնման աշխատանքներ.

14) ապրիլի 30-ին՝ Վայոց Ձորի մարզի Վայք համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ,

15) ապրիլի 30-ին՝ Լոռու մարզի Ստեփանավան համայնք՝ դիմումների ընդունման և խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ:

4. Հաստատել 2026 թվականի ապրիլ ամսին շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով Երևան քաղաքում Ղարաբաղից տեղահանված անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումների ընդունման հնարավորությունը՝ ըստ անհրաժեշտության հրամանի առկայության դեպքում:

5. Հաստատել 2026 թվականի ապրիլ ամսին շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով Երևան քաղաքում Ղարաբաղից տեղահանված անձանց Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու դիմումների ընդունման հնարավորությունը՝ ըստ անհրաժեշտության հրամանի առկայության դեպքում:

6. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի մամուլի քարտուղար, հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ Նարեկ Սարգսյանին՝ 2026 թվականի ապրիլ ամսվա շրջիկ սպասարկման գրասենյակների միջոցով մատուցվող ծառայությունների սահմանված ժամանակացույցի և երթուղու վերաբերյալ իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Խաչատուր Իգիթյանին՝ շրջիկ սպասարկման գրասենյակների աշխատանքների իրականացման ընթացքում կազմակերպել գործուղումների պլանավորումը և ֆինանսական միջոցների հատկացման գործընթացները:

8. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
27.03.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ